LegalLab
law boutique

Հասցե՝ Թումանյան փող. 28/20, # 34, Երևան, ՀՀ
Հեռ. +374 12 522 051

ք. Երևան 03.12.2021 թ.

Սույն մեկնաբանությունը վերաբերվում է «Վիքիմեդիա Հայաստան» գիտակրթական հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Կազմակերպություն) նոր խմբագրությամբ կանոնադրության (այսուհետ՝ Կանոնադրություն) գրանցմանը և դրանում կատարված փոփոխություններին և կատարվել է ՀՀ օրենսդրության և իրավական պրակտիկայի հիման վրա:

Կազմակերպության Կանոնադրությունը հաստատվել է «Վիքիմեդիա Հայաստան» գիտակրթական հասարակական կազմակերպության 2020 հունիսի 6-ից 8-ը՝ առցանց եղանակով տեղի ունեցած արտահերթ համաժողովի 12 հուլիսի 2020 թվականին կազմված N 12062020 արձանագրության 5-րդ օրակարգային հարցի թիվ 5-րդ արձանագրային որոշմամբ: Կանոնադրության փոփոխության և արձանագրության մեջ ներառված այլ որոշումների մասով քվեարկությունից հետո կազմվել է արձանագրություն, որի քաղվածքը Կանոնադրության հետ միասին ներկայացվել է գրանցման ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն (այսուհետ՝ Գործակալություն):

Գործակալության կողմից 2020 թվականի հուլիսի 29-ին Կազմակերպության իրավական հարցերով ներակայցուցչին հեռախոսազանգի միջոցով ներկայացվել են փոփոխություններ կանոնադրությունում, որոնք իրենց բնույթով բխում են Օրենքից, նպատակ ունեն հստակեցնել կանոնադրության մեջ առկա կարգավորումներ*: Ընդ որում հաշվի առնելով փոփոխությունների ոչ բովանդակային լինելը, Ռեգիստրի կողմից ներկայացվել է շտկումներ կատարելու առաջարկ, այլ ոչ թե կայացվել է կանոնադրության գրանցման մերժման որոշում՝ հաշվի առնելով մերժման հիմքերի բացակայությունը:*

Համաձայն ՀՀ իրավական պրակտիկայի և օրենսդրության Գործակալությունն իրավունք ունի դիմումատուին առաջարկել ներկայացված փաստաթղթերում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հիմք չեն հանդիսանում դիմումի մերժման և փոփոխությունների չգրանցման համար և այդ փոփոխությունները

ներկայացնելուց հետո կատարել նոր խմբագրությամբ կանոնադրության կամ այլ փոփոխությունների գրանցում:

2020 թվականի հուլիսի 30-ին փոփոխությունները ներկայացվել են Գործակալություն և կատարվել է դրանց գրանցում:

Փաստում ենք, որ փոփոխությունները կատարվել են Ռեգիստրի առաջարկության հիման վրա բացառապես և չեն կրում բովանդակային բնույթ, հակառակ պարագայում առկա կլիներ կանոնադրության գրանցման մերժման որոշում, որի հիման վրա էլ կառաջանար անհրաժեշտություն հրավիրելու նոր արտահերթ համաժողով:

Ինչ վերաբերվում է Գործակալության կողմից առաջարկված փոփոխություններին, ապա Գործակալությունը «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» ՀՀ օրենքի համաձայն պարտավոր է մերժել այն փոփոխությունների գրանցումը, որոնցում առկա են օրենսդրական անհամապատասխանություններ: *Գործակալությունը հիմք ընդունելով այն հանգամանքը, որ այդ փոփոխությունները ոչ թե օրենսդրական անհամապատասխանություններ են, այլ պարզապես շտկումների կարիք ունեցող փոփոխություններ առաջարկել է դրանք շտկել և ներկայացնել Գործակալություն:*

Այս փոփոխությունները ևս մեկ անգամ համաժողովի հաստատմանը չեն ներկայացվել, քանի որ դրանք չեն եղել բովանդակային, այլ միայն տեխնիկական և հստակեցող, իսկ համաժողովի հրավիրումը միջինում տևում է 1 ամսից ավելի, ուստի կատարվել են համապատասխան փոփոխությունները և կատարվել է գրանցում:

Եթե հարց է առաջանում տվյալ փոփոխությունների կատարման և դրանց «բովանդակությանը» վիճարկման հետ կապված, ապա պետք է շեշտել, որ նախ՝ առանց դրանց կատարման հնարավոր չէր լինի կատարել կանոնադրության գրանցում, ինչպես նաև այդ դրույթների կիրառելիությունը չի կարող ազդել ամբողջական փաստաթղթի իրավազորության վրա, քանի որ կանոնադրության յուրաքանչյուր

LegalLab
law boutique

Հասցե՝ Թումանյան փող. 28/20, # 34, Երևան, ՀՀ
Հեռ. +374 12 522 051

դրույթ ունի օրենսդրական հիմք: Եթե նույնիսկ վիճարկվի Կանոնադրության մեջ՝ համաժողովի անցկացումից հետո կատարված փոփոխությունների օրինականությունը, ապա դրա հիմքով կարող են կասակածի տակ առնվել Կազմակերպության այն գործողությունները, որոնք ուղղակիորեն բխել են կատարված մի քանի փոփոխություններից և չեն բխում ՀՀ օրենսդրությունից, մասնավորապես «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքից:

Ամփոփելով վերագրյալն անհրաժեշտ է շեշտել, որ նման փոփոխությունների կատարումը ուղղակիորեն բխել է ՀՀ օրենսդրության պահանջներից, միտված է եղել վերջինիս պահպանմանը և չի կատարվել ՀՀ օրենսդրությանը հակասող եղանակով: Կատարված փոփոխությունները նպատակ են ունեցել թույլ չտալ օրենսդրական և կանոնադրական բացեր, որոնք հետագայում կարող էին հանգեցնել հակասության ՀՀ օրենսդրության հետ: Միևնույն ժամանակ պետք է ամրագրել, որ Կազմակերպությունն ունի իր գործունեությունը կանոնակարգող երկու հիմնական շարժիչ ուժ՝ ՀՀ օրենսդրությունը և Կազմակերպության նոր խմբագրությամբ կանոնադրությունը և ցանկացած գործողություն, որը կարող է կատարվել Կազմակերպությունում պետք է բխի և պետք է տեղի ունենա ՀՀ օրենսդրությանը և Կազմակերպության կանոնադրությանը համապատասխան:

«ԼեգալԼաբ» փակ բաժնետիրական ընկերության ավագ իրավաբան

Մերի Օհանյան _____